

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2018 թվականի հոկտեմբերի 18-ի N 1174-Ն
որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ
կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման
նախագիծ**

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2020 թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1174-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 6-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի §Պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին՝ N 1174-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 6-րդ կետի 4-րդ ենթակետում «կնքված պայմանագրի համաձայն» բառերը հանել.

2) 12-րդ կետից հետո լրացնել 12.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.1. Հայտարարված վարժական հավաքին չի կարող կանչվել այն քաղաքացին, ով պատիժ է կրում ազատազրկման կամ կարճաժամկետ ազատազրկման ձևով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ վարժական հավաքներից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման,

երթ քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել ներգրավելու հայտարարված վարժական հավաքին:».

3) 14-րդ կետի առաջին նախադասությունում «դեպքում» բառը փոխարինել «, ինչպես նաև օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կամ «Պաշտպանության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պայմաններ չունենալու դեպքերում» բառերով.

4) 18-րդ կետում «տարածվում են» բառերից հետո լրացնել Ֆայմանագրային՝ բառը.

5) 20-րդ կետում՝

ա. «(պաշտոնը)» բառից հետո լրացնել «, իսկ վարձատրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը,

բ. լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

- Ընդ որում, խաղաղ ժամանակ հայտարարված վարժական հավաքներին կարող են կանչվել մինչև 15-ը ներառյալ աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ առավելագույնը մեկ աշխատող, 16-ից մինչև 30-ը ներառյալ աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ առավելագույնը երկու աշխատող, իսկ 30-ից ավելի աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ աշխատողների ընդհանուր թվի ոչ ավելի, քան 5 տոկոսի չափով աշխատողներ:՝:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

Ն. Փաշինյան

2023թ.

Երևան